63
0-88

ԱՍԽՀ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ ՏԵԽՊՐՈՊ

ՈՐԻՆԱԿԵԼԻ ԱԳՐՈԿԻՆՈՆՆԵՐ

ՄՐԳԻ ՅԵՎ ՊՏՂԻ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Библиотека
Института
Востоковедения
Академии Наук
СССР

Զ Ր Ի

ԱԶԵՐՆԵՇՐ

ԳՅՈՒՂԱՏՆՏ. ԲԱԺԻՆ
ԲԱԳՈՒ
1934

63
0-88

Թարգ. Հ. Սարգսյան, Տեխ.-խմբ. Կ. Թաալանյան

Baş Mətbuat Mydirligi Myvəkkilligi № 2031. Sifariş № 317. Tiraž 500. Istehsalata verilmiş 16/III-34. Capa imzalanmış 13/IV-34. Cap listi 1/44. Kəqəz formatı 82X110. Azərnəşr mətbəəsində basıldı 26-lar adına „Kitab Sarayı". „Bakı, Əli Bajramov küçəsi.

Ա 675

ՈՐԻՆԱԿԵԼԻ ԱԳՐՈԿԱՆՈՆՆԵՐ ՄՐԳԻ ՅԵՎ ՊՏՂԻ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՎՈՐՈՇՈՒՄ № 119

ԱՍԽՀ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ ԿՈԼԵԳԻԱՅԻ, 1934 Թ. ՓԵՏՐՎԱՐ 7-ԻՑ.

Տեխպրոպի յեվ դաշտագործական վարչության ներկայացրած որինակելի ագրոկանոնները չալթուկի կենափի, կանեփի, այգեգործության, բանջարաբուծության, արախիսի, խաղողագործության, գարնանային ցորենի ու գարու յեվ ծխախոտի համար, հաստատել:

Առաջարկել բոլոր ռայ. հողբաժինների յեվ ՄՏԿ-ներին, յուրաքանչյուր կոլտուրայի համար տրվող ագրոկանոնների հիման վրա առաջավոր կոլխոզների յեվ սովխոզների ներկայացուցիչների մասնակցությամբ կազմել ագրոկանոններ համաձայն իրենց ռայոնների պայմաններին յեվ Ռայգործկոմների կողմից քննարկվելուց հետո մինչեվ մարտի 20-ը ներկայացնել ԱՍԽՀ Հողժողկոմատին՝ հաստատելու համար:

Հողժողկոմատից հաստատված ռայոնական ագրոկանոնները, վորոնք պետք է հրատարակվեն վորպես պարտադիր վորոշում—Ռայգործկոմի նախագահությանը՝ անցկացնել կյանքում:

Հողժողկոմ ՎԵԶԻՐՈՎ

0 4 SEP 2013
14910
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
56059-66

1933 թվին մենք զգալի հաջողություններ ունենք այգու հողամասերն ընդարձակելու բնագավառում։ Դրա հետ միաժամանակ մեր այգիների բերքատվության բարձրացման և արտադրանքի վորակի բարելավման գործում հարկավոր հետևանքների չենք հասել։

Սովխոզներն ու կոլխոզները, նույպես և անհատական աշխատավոր տնտեսություններն ինչպես հարկավորն է պայքար չեն ծավալել կորուստների դեմ, պայքար հանուն խոշոր այգեգործական տնտեսության տեխնիկայի տիրապետելուն։

1934 թվին՝ այդ թերությունները վճռականապես պետք է վերացվեն։ Հիմնական ուշադրությունը պետք է այժմ դարձնել բերքի բարձրացման և արտադրանքի վորակի բարձրացման խնդիրների լուծման վրա, վորովհետև դրանում է կայանում առաջնորդ ընկ. Ստալինի կոլխոզնիկներին դարձնել ունևոր լոզունգը վճռելու հաջողության գրավականը։

Աշխատանքի և արտադրության կազմակերպումը կարևորագույն պայմանն է հանդիսանում մրգապտղային արտադրության մեջ վորակական և քանակական ցուցանիշները բարձրացնելու։ Մրգատու ծառերի կուլտուրան լինելով բազմամյա, պահանջում է նրան խնամելու կարողություն և ունակություն, դրա համար էլ բրիգադների ներսում հատուկ մասնագիտացած ողակների կազմակերպումը, վորոնք կցված լինեն վորոշակի արտադրական տեղամասերի, լուրջ կարևորություն է հանդիսանում։

Խոշոր, բարձր կուլտուրական այգու տնտեսության ագրոտեխնիկայի յուրացումը պետք է կենտրոնական տեղ գրավի կոլխոզների և անհատական աշխատավորական տնտեսությունների ամբողջ արտադրական գործունեության մեջ։

Ագրոտեխնիկայի կարևորագույն խնդիրներն են հանդիսանում—հողի մշակումը, պարարտացումը, սիստեմա-

տիկ պայքար տանելը վնասատուների ու հիվանդությունների դեմ և ծառի գագաթի խնամելը։

Հողի մշակման գլխավոր խնդիրներն են հանդիսանում խոնավության խնայումը և պայքարը մոլախոտների դեմ։

Շատ տնտեսություններ անթույլատրելի արհամարական վերաբերմունք ունեն հողի պարարտացման հարցի նկատմամբ։ Այգիները համարյա թե չեն պարարտացրվում։ 1934 թ. պետք է պարարտացնել մեր այգիների կեսից վոչ պակասը։

Գյուղական անտնտեսության վոչ մի բնագավառում վնասատուներն ու հիվանդությունները այնպիսի վնաս չեն հասցնում, ինչպես մրգապտղային տնտեսության մեջ։

Վնասատուներից և հիվանդություններից մենք յուրաքանչյուր տարի կորցնում ենք բերքի մի մասը։ Մնացած բերքը զգալի չափով արժեքազուրկ է դառնում վնասատուների և հիվանդությունների հասցրած վնասներից։

Վնասատուներին յեվ հիվանդություններին անխնա պայքար պետք է հայտարարվի։ 1934 թվին այգիներն պետք է մաքրված լինեն վնասատուներից։ Ծառի գագաթի խնամքի բացակայությունը բացասաբար է անդրադառնում բերքատվության և առանձնապես արտադրանքի վորակի վրա։ Անխնամությունը հանգում է մրգաբեր ճյուղերի թուլացմանը գագաթի ներսը, իսկ առաջացած պտուղները լինում են մանր, թույլ գունավորված և վատ զարգացած։ Դրա համար ել անհրաժեշտություն է հանդիսանում նրման ծառերի գագաթը լուսավոր դարձնել նոսրացումով։ Միաժամանակ անհրաժեշտ է կտրտել չորացող և խիստ հիվանդ ճյուղերը, արմատից հանել մահացող ծառերն ու կոճղերը և փայտացած ծառի բները և հիմնական ճղները։

Ստորև ագրո-կանոններում տրվում է աշխատանքների մանրամասը թվարկումը և նրանց կատարման ժամկետները, վորն անպայման պետք է կիրառեն բոլոր կոլխոզները և աշխատավորական անհատական տնտեսությունները պարտադիր կարգով։

ԱԳՐՈԿԱՆՈՆՆԵՐ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹՎԱՐԿՈՒՄԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

ԶՄՐԱՆԸ ՅԵՎ ԳԱՐՆԱՆԸ

Բույսի հանգստյան ժամանակաշրջանում (1/XI—1/IV) յերբ այդ թույլ է տալիս յեղանակի և հողի դրությունը, անհրաժեշտ է.

1. Լուսավոր դարձնել գագաթը, կտրել գայլուկները, ավելորդ չոր, հիվանդ խճճված ճյուղերը և նրանց այրել։

2. Կտրտել սպիտակած մասերը (ճագոմ-омела) և վրհուկի խոտերը ծառերի վրայից։

3. Փչակները մաքրել քայքայված ընափայտերից, կատարել հականեխում և լցնել նրանց ցեմենտով, ավազախառն կրով կամ չոր տորոված կավով։

4. Արմատահան անել հին, պառված մրգաբեր և պտղաբեր բույսերը։

5. Պարարտացնել գոմաղբով կամ կոմպոստով։

6. Բույսի հանգստացման ժամանակաշրջանի վերջին և բողբոջներն ուռչելու նախորյակին (1/III-1/IV) կատարել։

ա) Հին ծառերի ջահելացումը։

բ) Հին ծառերի պատվաստումը և վերապատվաստումը.

գ) Կրծող կենդանիների հասցրած վերքերի բժշկելը։

դ) Ջահել ծառերի ըներից վերցնել նապաստակների դեմ դրած պաշտպանողական իրերը։

Ձյունը հալչելուց հետո և մինչև բողբոջները բաց թողնելն ու հողի թեթև չորանալը (1/III)—20/III)։

1. Վերանորոգել վոռոգման ցանցը, մաքրել և խորացնել առուները և այլն։

2. Հերկել շարքամեջերը և փորել շրջաններ բների շուրջը՝ ծառերի տակ, ջրելով հողի վերին խավը։

Բողբոջներ բաց թողնելուց (ապրիլ 10-15) սկսել։

Այգիների առաջին բժշկությունը խնձորաճիճվի, քոսի և ուրիշ վնասատուների ու հիվանդությունների դեմ մըկընդեղա-թթվային կալցիոնով և անջրդիացրած պղնձարջասպով։

Բողբոջերը լիովին բաց թողնելուց, կոկոնների առանձնացումն սկսելուց հետո (ապրիլ 15-25) անցկացնել այգիների յերկրորդ բժշկությունը։

Հիմնական տեսակների թերթիկների 75% ընկնելուց հետո (մայիս 5 15) կատարել այգիների յերկրորդ բժշկությունը խնձորենու ցիցի, առաջացած խնձորաճիճվի մրգի լափողև սունկային հիվանդությունների դեմ մկնդեղային թթվային կալցիոնով և անջրդիացրած պղնձարջասպով։

Այգին ծաղկելուց հետո, յերբ խնձորի կոկոնը դառնում է անտառի կաղնի չափ (հունիս 10-15), կատարել այդու առաջին ջրելը մինչև մոլախոտների զարգացման ուժեղացումը (5-10 հունիսի), կատարել բների շուրջը փորած շրջանների մակերեսային փխրացումը և շարքամեջերը հերկել խամ կամ զբաղեցրած ցեղերի դեպքում։

ԱՄԱՌԸ

1. Մոլախոտերի ծաղկելու սկզբին և մինչև թփուտների ընձյուղների կոպտացումը (հունիս 10-15) հարել մոլախոտերը և մանր մոլախոտ թփերն այդում։

2. Յերբ խնձորի կոկոնը մոտենում է ընկույզի մեծության (հուլիս 1-10), կատարել այդու յերկրորդ ջրելը։

3. Ամբողջ ամառը պարբերաբար հավաքել կաթուկը և շահահանման յենթարկել (утилизировать)։ Շահահանման համար անպետք պտուղները վոչնչացնել։

4. Յերկու-յերեք շաբաթ անցնելուց յերրորդ սրսկումից հետո (25/V—5/IV), կատարել չորրորդ սրսկումը բորդոսյան հեղուկով խառնած փարիզյան կանաչի հետ քոսի, փթածի, մրգեր լափողի և ուրիշ վնասատուների ու հիվանդությունների դեմ։

5. Դանբուլ և ալուչա մրգերի գույնը փոխելուն պես (հուլիս 15-25) կտրել և այրել դանբուլի և ալուչայի այն ճյուղերն ու ընձյուղները, վորոնց մրգերը վնասված են պարկավոր հիվանդությամբ։

6. Նորմալ հասնելուց 6-7 որ առաջ հավաքել խնձորի և տանձի կանուխ հասնող տեսակները։

7. Ամառային խնձորի և տանձի վերջանալուց հետո (ոգոստոս 1-10) կատարել յերկրորդ ջրելը։

8 Դաշտային և բանջարանոցային բույսերը անմիջապես քաղելուց հետո (15/VIII—16/X) կատարել հողի հերկումն ու ցաքանումը պտղա-մրգային ջահել տունկեր տընկելու համար՝ փոսերում տնկելուց։

ա) 20 սանտիմետր խորությամբ

բ) խոռոչներում տնկելուց, այսինքն առանց փոսի 35-40 սանտիմ. խորությամբ.

9. Յերբ ճյուղերը մրգերի ծանրության տակ սկսում են թեթև կերպով կռանալ (25/VII-5/VIII), դնել չաթալներ (հենարաններ)։

10. Խնձորի և տանձի աշնան-ձմեռային տեսակները քաղելու հասունացումից մի ամիս առաջ (ոգոստ. 20-25) կատարել ծառերի հինգերորդ սրսկումը փարիզյան կանաչի և բորդոսյան հեղուկի խառնուրդով քոսի և միրգ լափողների յերրորդ սերնդի դեմ։

ԱՇՆԱՆԸ

1. Նորմալ հասնելուց 10 որ առաջ (սեպտեմբեր 20-30) հավաքել խնձորի և տանձի աշնանային և ձմեռային տեսակները։

2. Վարն ավարտելուց հետո (15/VIII-15/X) կատարել հողամասի բաժանումը ջահել այգիներ տնկելու համար և փոսեր փորել 70 սանտիմետր տրամագծով ու 50 սանտի-

մետր խորությամբ։ Եթե հատատարած վար չի կատարվում, ապա փոսերը պետք է լինեն 1 մետր տրամագծով և 0,5 մետր խորությամբ։

3. Մրգերը և չաթալները (հենարանները) հավաքելուց հետո (հոկտեմբեր 15-20) կտրել սպիտակած մասերը և վհուկի խոտերը ծառերի վրա, լուսավոր դարձնել դագաթները, հեռացնել գայլուկները, ավելորդ շոշերը, չոր և խճճված ճյուղերը, մաքրել փչակները քայքայված բնափայտից, վոչնչացնել խնդակներն ու զահմանները բուսած մոլախոտերով հանդերձ, հավաքել ընկած տերևները և այրել նրանց։

4. Բերքը և հենարանները հավաքելուց հետո (հոկտեմբեր 15-20) մաքրել բները և հատատ ճյուղերը փայտացած կեղևից, ծառալոռից և մամուռից փռած բրեզենտների վրա և բներն ու ճյուղերը սրսկել յերկաթարջասպով։

5 Մինչ սառնամանիքները վրա հասնելը (հոկտեմբեր 25- նոյեմբեր 15) այգիներում ջահել ծառերը փաթաթել կրծողներից պաշտպանելու համար։

ԱՄԵՌԸ

1. Վերանորոգել ցանկապատը։

2. Արմատահան անել հին, պառված մրգային և պտղային բույսերը, նույնպես և բնափայտային մոլախոտ—թփուտները և նոսրացնել խիտ տունկերը։

3. Պատրաստել չաթալները (հենարանները) և նյութեր պատնեշի համար։

Նոր մրգային տունկեր գցելը

1. Կոլխոզներում և սովխոզներում ապրանքային այգիներ գցելուց պետք է նկատի ունենալ մոտակա տարիներում այգիների տարածության լայնացումը և այդ մասիվի խոշորացումը։

2. Այգու տնկելը նախագծելուց, հարկավոր է նկատի ունենալ արտադրական պրոցեսների հետագա մեքենայացումը։

3. Հողամասերի բաժանումը մրգային տնկարանների համար, խիստ-մեծացած վայրենիների վրա պատվաստելը, կատարել քառակուսի ստանդարտ տարածության վրա։

Նման տարածությունները հանդիսանում են.

Խնձորենու	համար	10×10	մետր
Տանձենու	»	10×10	»
Կեռասենու	»	10×10	»
Ծիրանենու	»	10×10	մետր
Բալենու	»	6×6	»
Դամբիլենու	»	6×6	»
Դեղձենու	»	6×6	»
Նշենու	»	6×6	»
Խնձորենու	»	6×6	»
Ցելագենու	»	0,9×0,3	»
Մալինայի	»	2,5×1,0	»
Սև հաղարճենու	»	3,0×1,75	»
»	սպիտակ	2,75×1,75	»
և սև թփի			

4. Նոր այգիներ տնկելը, վորպես որենք կատարել աշնանը և վորպես բացառություն՝ գարնանը։

ա) Աշնանային տունկի ժամկետները դաշտային մասի համար հոկտեմբեր 1-ից մինչև դեկտեմբեր 15-ը, իսկ նախալեռնային և լեռնային մասի համար հոկտեմբեր 1-ից մինչև դեկտեմբեր 1-ը։

բ) Գարնանային տունկի ժամկետները դաշտային մասի համար մարտի 1-ից մինչև ապրիլ 20-ը, իսկ նախալեռնային և լեռնային շրջանի համար մարտ 15-ից մինչև մայիս 1-ը։

5. Տունկերը տնկելու համար պետք է լինի.

ա) լավ զարգացած արմատային սիստեմով.

բ) լավ զարգացած բունով առանց վնասվածքի.

գ) ուղիղ ձևակերպված գագաթով յերկամյանների համար և բարձրությամբ, վորը բավարար լինի միամյաների գագաթը ծածկելու համար։

դ) արմատներով, վորոնք կտրված լինեն վոչ կարճ քան 20 սանտիմետր միամյաների և 30 սանտիմետր յերկամյաների համար։

6. Տունկային նյութերի նախապատրաստումը.

ա) փորելով հանելու ժամանակ վնասված տեղերի նորոգումը.

բ) հիվանդ և վնասված արմատների կտրելը։

7. Տունկը դնելուց նրա արմատավիզը պետք է հողի հորիզոնից բարձր լինի, կախված հողի սկզբնական նախապատրաստումից և բնույթից այն հաշվով, վորպեսզի հողն ամբողջովին նստելուց հետո նրա արմատավիզը մակերևույթի հետ միահավասար լինի։

С 34-
0267

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

27 МАЯ 1934

ՊԵՏ. ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZUUՌ-Арм ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

63
0-38

Техпроп НКЗ АССР

Примерные агроправила по плодовым и ягодным культурам

Азернешр—Сельхозотдел Баку—1934.

Հ Ազգային գրադարան
NL0276992

14910